


3  
Ն. Ի. ՏՐՈՏԻՄԵՆՆԿՈՎ

# ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ՇԱՐԲԱՑԱՆ ՄԵՔԵՆԱՅԻ



631.33

Տ-99

ՍՏՈՒԳՈՒՄԸ,  
ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ  
ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ՀԵՌՆԱՅԻՄԵՆՆ ԿՈՎԿԱՍ 1983 Ք.

CA <sup>И</sup> 379

Ն. Ի. ՏՐՈՑԻՍԵՆԿՈՎ

24 SEP 2010

631.33

S-99

ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ՇԱՐՔԱՅԱՆ ՄԵՔԵՆԱՅԻ  
ԱՏՈՒԳՈՒՄԸ, ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОЧНОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР



ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»  
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ 1982

24 AUG 2013

16400

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ինչպե՞ս և սա՞յի շարժացանք . . . . .	3
2. Հացահատիկային շարժացան մեքենաների հիմնական տեսակները	7
3. Ինչ պետք է անել վորպե՞զի հաջող աշխատի շարժացանք . . . . .	10
4. Շարժացան մեքենաների օսուղումը և գործարկումը . . . . .	18
5. Շարժացանի խնամքը աշխատանքի ժամանակ . . . . .	21



59218.66

ԻՆՉ ՈԳՈՒՑ Ե ՏԱԼԻՍ ՇԱՐՖԱՅԱՆԸ

Գյուղատնտեսության ասպարիզում յերկրորդ հնգամյակի կենտրոնական խնդիրն է՝ վճռականապես բարձրացնել բերքատվությունը: Այս խնդրի հաջող լուծումը—բոլոր կուսակցական, խորհրդային, արհմիութենական, կուլտնտեսային և խորհրտեսային կազմակերպությունների, ինչպես նաև բոլոր կուլտնտեսականների, խորհրտեսությունների և մեքենատրակտորային կայանների բանվորների զործն և հանդիսանում:

ԽՍՀՄ Ժողկոմխորհը և Համկոկուսի (բ) կենտկոմը 1932 թվի սեպտեմբերի 29-ին կայացրած իրենց վորոշման մեջ հետևյալ կերպ բնորոշեցին գյուղատնտեսության զարգացման խնդիրները տվյալ մոմենտում: Եզյուղատնտեսության ասպարիզում աշխատող բոլոր կուսակցական—խորհրդային, կոմյերիտական և տնտեսական կազմակերպությունների գլխավոր ուղադրությունը կենտրոնացնել անխտիր բոլոր մշակույթների բեքբաօվորյան բաքծրացման վրա, վորպես գյուղատնտեսության զարգացման կենտրոնական խնդիրը տվյալ մոմենտում»:

Անկասկած, մենք ունենք բոլոր հնարավորություններ՝ աջողությամբ լուծելու համար կուսակցության և կառավարության կողմից զրված այս վերին աստիճանի կարևորագույն խնդիրը:

Յերկրամասում համատարած կոլեկտիվացման հաջող շափարտումը հիմնականում և նրա հիման վրա կուլակույթյան վերացումը՝ վորպես դասակարգ, կուլտնտեսությունների և խորհրտեսությունների կազմակերպչական-տնտե-

աւական ամրացման ասպարիզում ձեռք բերված հաջողու-  
թյունները, տրակտորային, գյուղատնտեսական բարդ մե-  
քենաների և գործիքների լայն կիրառումը և սոցիալիստա-  
կան գյուղատնտեսութեան մեջ դիտութեան նվաճումները  
լայն չափով կիրառելու հսկայական հնարավորութեանը—  
այս բոլորն ահա ստեղծում են այն բոլոր նպաստավոր  
պայմանները, վորոնք անհրաժեշտ են բերքատվութեան  
բարձրացման համար:

ՄՄՀՄ-ի ժողովրդական տնտեսութեան զարգացման  
առաջին հնգամյակում մենք, կուսակցութեան ղեկավարու-  
թեամբ, վիթխարի հաջողութեաններ ձեռք բերինք վողջ  
ժողովրդական տնտեսութեան, դրա թվում նաև գյուղա-  
տնտեսութեան զարգացման և վերակառուցման ասպարի-  
զում: Ստեղծված և սեփական առաջավոր տեխնիկական  
բազա՝ վողջ ժողտնտեսութեան սոցիալիստական վերակա-  
ռուցման համար:

«Առաջին հնգամյակը նոր ձեռնարկութեաններ, հողա-  
գործութեան մեջ—կոլտնտեսութեաններ և խորհրտնտեսու-  
թեաններ շինարարութեան հնգամյակ եր. խորհրտնտեսու-  
թեաններ և կոլտնտեսութեաններ, վորոնք հանդիսանում  
են ամբողջ գյուղատնտեսութեանը սոցիալիզմի հիմունքների  
վրա կազմակերպող լծակներ»: (ՀԿ (Բ)Կ Կենտկոմի և Կենտ-  
րոնական Վերահսկիչ Հանձնաժողովի միացյալ պլենումի  
վորոշումից):

Հետագայում մեզ անհրաժեշտ և լիովին յուրացնելու կազ-  
մակերպչորեն ևլ ավելի ամրացնել այս ձեռնարկութեանն-  
երը, մեզ անհրաժեշտ և գյուղատնտեսութեան մեջ զգալի-  
որեն բարձրացնել բերքատվութեանը, ավելացնել ապրան-  
քային և ընդհանուր արտադրանքը:

Վարպետի հաջողութեամբ լուծվի այս խնդիրը, դրա  
համար անհրաժեշտ և «զյապուր ու ռադուր» ղարձնել  
վոյ բն արտադրանքի քանակական ավելացման, այլ արտա-  
դրանքի վտակը յավացնելու յեվ արտադրանքի արտադրող-  
կոմսուխուրք բարձրացնելու վրա արդուեմարտայան մեջ:

վոյ բն ցանխատարածութեաններ ընդլայնման, այլ բեքի  
բարձրացման յեվ արտադրանքի վտակի յավացման վրա գյու-  
ղատնտեսութեան ասպարիզում» (ՀԿ (Բ)Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի  
պլենումի վորոշումից):

Գյուղատնտեսական արտադրութեան և աշխատանքի  
ձիշտ կազմակերպումը, հավասարեցման և դիմադրկութեան  
վերացումը, աշխատանքային կարգապահութեան ամրապն-  
դումը և աշխատանքի արտադրողականութեան բարձրացումը  
արտոտեխնիկական միջոցառումների կիրառման զուգնթաց  
հանդիսանում են բերքատվութեան բարձրացման ուժեղ  
յծակ:

Բերքատվութեան բարձրացման համար վիթխարի նշա-  
նակութեան ունի սահմանված բոլոր ազրոտեխնիկական  
պահանջների ձիշտ և ժամանակին կատարումը: Յերկրա-  
մասի առաջավոր խորհրտնտեսութեանների և կոլտնտեսու-  
թեանների գյուղատնտեսական փորձակայանների ավյալները  
ցույց են տալիս, վոր ազրոտեխնիկական կանոնների կի-  
րառումը հնարավորութեան և տալիս 2—3 անգամ բար-  
ձրացնելու մեր դաշտերի բերքատվութեանը և հսկայական  
չափով բարձրացնելու աշխատանքի արտադրողականու-  
թեանը, ավելացնում և կոլտնտեսութեանների և բարեխիղճ  
կոլտնտեսականների յեկամուտները: Սա պարտավորեցնում  
է մեզ լիովին տիրապետել ազրոտեխնիկային և ամբողջովին  
իրագործել ազրոտեխնիկական պահանջները, վորովհետև  
«Վերահառուցման Երջանում տեխնիկան վեռում և ամեն  
թեջ» (ՄՏԱԻՆ):

Առաջիկա դարնանացանի կամպանիային նախապատ-  
րաստվելու ժամանակաշրջանում, խոշոր ուշադրութեան  
պետք է դարձնել կոլտնտեսային յեվ խորհրտնտեսային  
կազմերի պատրաստման վրա, կոլտնտեսականների յեվ  
խորհրտնտեսութեան բանվորների կողմից ազրոտեխնիկական  
կանոնները դիտակցարար յեվ ուժեղ կերպով յուրացնելու  
վրա: Սոցիալիստական գյուղատնտեսութեան կազմերը հարկ  
յեղած չափով պետք է դիմել և ազրոտեխնիկական գիտե-

իքնեբով: Սա ամենաանհրաժեշտ պայմաններէց մեկն է հանդիսանում հաջողութեամբ լուծելու տվյալ մոմէնտի այն կարեւորագուէն խնդիրը, վոր դրված է մեր առաջ՝ մեր կուսակցութեան և բանվոր դասակարգի առաջնորդ ընկ- Ստալինի կողմից:

«Այժմ խնդիրը կայանում է նրանում, վա՛ր պիտի է կազմակերպչորեն ամբապնդել կոլեկտիվները, վա՛ր էլ այն- սեղից վե՛րսա՛րտա՛ր տարեւոյն, կոլեկտիվները համար շնկել իսկապէս ստուգված բոլորակայան կադրեր յե՛վ կոլեկտի- տարյունները դարձնել իսկապէս բոլորակայան»: (ՍՍՍՍԻՆ):

Կուլակութեան մնացորդները, սպիտակ գվարդիական- ները, նախկին առևտրականները և այլն սողոսկեցին կոլ- տնտեսութեաններն ու խորհրդայնութեանները և, ծած- կվելով «կոլտնտեսականի» և «բանվորի» դիմակի տակ, փորձում են ներքուստ վիժեցնել կոլտնտեսային շինարա- բութեանը: Նրանք ոգտապորձում են կոլտնտեսականների՝ յերեկվա մենատնտեսների մանր սեփականատիրական տրա- մադրութեանները, վորպեսզի սարսուղի յենթարկեն կու- սակցութեան և խորհրդային իշխանութեան միջոցառումները, կազմակերպեն հասարակական (սոցիալիստական) սեփա- կանութեան հափշտակութեան ու գողութեան, քայքային աշխատանքային կարգապահութեանը, վիժեցնեն ագրոտեխ- նիկական միջոցառումների անցկացումը: Այս հանդամանքը պարտավորեցնում է մեզ բարձրացնել դասակարգային զգո- նութեանը, ել ավելի անողոք պայքար մղել հակախորհր- դային տարրերի, կուլակային վրասաբարների դեմ, և մեր առաջ դնում է ագրոտեխնիկայի համար վճռական պայքար մղելու խնդիրը:

Ագրոտեխնիկական զանազան ձևերի միջև շարքային ցանքսը խոշոր նշանակութեան ունի: Շարքային ցանքս կատարելու ղեկավարում սերմերն ավելի հավասարաչափ են ցանվում հողի վերին շերտում, քան թե շաղաքանի ժամա- նակ, թաղվում են խոնավ հողում և միահավասար խորու- թեամբ: Սրա շնորհիվ ձիերը համաչափ և համահավասար են

լինում, բույսերն ավելի լավ են զարգանում և միաժամա- նակ են հասնում: Իսկ վերջին հաշիվով, գյուղատնտեսական մշակույթների բերքը բարձրանում է: Խորհրդայնութեան- ների և կոլտնտեսութեանների փորձակայանների բազ- մամյա օրինակները ցույց են տալիս, վոր շարքացանը շա- ղացանի հետ համեմատած, բարձրացնում է մի հեկտարի բերքը 1 և ավելի ցենտներով:

Բացի դրանից, ցանքսը շարքերով կատարելու ղեկավարում, սերմերը հողի մեջ թաղվում են ամբողջովին, իսկ շաղացանի ղեկավարում սերմերը կամ վատ են թաղվում, կամ ընկնում են չոր հողում և չեն աճում: Այդ իսկ պատճառով շաղացանի ժամանակ պետք էլինի սերմացանի նորմայից ավելի շատ սերմացու ցանել:

Այսպիսով, ցանքսի շարքային յեղանակը տալիս է սեր- մացույցի խնայողութեան. այս խնայողութեանը, մոտավո- բապէս, հավասար է 20—25 կիլոգրամի՝ մի հեկտարի համար:

Ցանքսի շարքային յեղանակը հատուկ նշանակութեան ունի մանավանդ շարատունի—տեխնիկական բույսերը մշա- կելիս: Այս մշակույթները՝ ցանելիս, թողնում են լայն շա- բամիջյան տարածութեաններ, վորոնք հնարավորութեան են տալիս ցանքսերի մշակումը կատարելու ձիերով և տրակ- տորներով: Իսկ շարատունի և տեխնիկական բույսերի ցանքսամշակումը ձիերով և տրակտորներով կատարելն զգալի չափով պակասեցնում է աշխատանքի պահանջը, չա- փազանց հեշտացնում է աշխատանքը, եժանացնում և արա- գացնում է բույսերը խնամելու. առանձին գործողութեան- ների կատարումը:

## ՀԱՅԱՎԱՏԻԿԱՅԻՆ ՇԱՐՔԱՑԱՆ ՄԵԲԵՆԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մեր գյուղատնտեսութեան մեջ գոյութեան ունեցող հա- ցահատիկի շարքացան մեքենաները միատեսակ չեն: Նախ և առաջ, նրանք բաժանվում են յերկու մեծ խմբերի

դիակավոր խոփերով շարքացանների և սովորական, խորս-  
փածե խոփիկներ ունեցող շարքացանների: Առաջինների  
խոփիկները դիակածե են, իսկ յերկրորդներին—խարսխածե:  
Հասարակ խոփիկներ ունեցող շարքացաններն ավելի լավ  
աշխատում են լավ մշակված և մաքուր հողում: Խիտ հողե-  
րում սովորական խոփիկները վատ են թաղում սերմերը:  
Քացի դրանից, սովորական խոփիկներով շարքացանները  
հեղուկամբ լեցվում են մուխտտերի մնացորդներով և աշ-  
խատանքի ժամանակ պահանջում են մշտական և ուշադիր  
հսկողություն: Չհսկելու դեպքում, յերբ խոփիկները լեց-  
վում են, սերմերը կամ մնում են խոփիկների մեջ և չեն  
ցանվում, կամ թե կիսաթաղ մնում են հողի յերեսը:

Իրակավոր խոփիկներ ունեցող շարքացան մեքենաներն  
ավելի հարմար են: Նրանք, շնորհիվ դիակերի պտտվելուն,  
հարտում են մուխտտերի արմատները, փշրում են հողա-  
փոշուրը և աշխատանքի ժամանակ սովորաբար հողով չեն  
լցվում: Իրակավոր խոփիկներ ունեցող շարքացան մեքենա-  
ներով սերմերն ավելի լավ են թաղվում հողի մեջ: Իրա հա-  
մար ել վերջին տարիներում շարքացան մեքենաները, զըր-  
խավորապես, պատրաստվում են դիակավոր խոփիկներով:

Թե սրանք և թե այլ տեսակի շարքացաններ ունենում  
են տարբեր քանակությամբ խոփիկներ: Քիչ քանակու-  
թյամբ խոփիկներ ունեցող շարքացաններն ուղտադործվում  
են ձիով, իսկ տրակտորաքար շարքացաններն ունեն մեծ  
քանակությամբ խոփիկներ: Ձիաքար շարքացանները սովո-  
րաբար լինում են հասարակ խոփիկներով: Ձիաքար շարքա-  
ցանները հաճախ լինում են 7, 9, 11 և 13 շարքանի (այ-  
սինքն՝ խոփիկների կենտ թվերով), սակայն պատահում են  
նաև շատ խոփ ունեցող ձիաքար շարքացաններ—19 շար-  
քանի:

Իրակավոր խոփիկներ ունեցող ձիաքար շարքացանները  
սովորաբար լինում են 8, 10 և 12 շարքանի (շարքերի  
զույգ թվերով), սակայն կան նաև մեծ քանակությամբ  
խոփավոր շարքացաններ—մինչև 22 խոփիկ:

Վերջին տարիներում մեզ մոտ, Խորհրդային Միության  
մեջ, զլխավորապես պատրաստվում են տրակտորային շար-  
քացաններ: Նրանք պատրաստվում են առավելապես դիս-  
կավոր խոփիկներով: Տրակտորային շարքացանները հա-  
ճախ լինում են 19, 20, 24 և 28 շարքանի «Ռոստսելմաշ»  
և «Կարմիր Աստղ» գործարանները պատրաստում են մեծ  
քանակությամբ տրակտորային շարքացաններ, վորոնք ու-  
նեն 24 շարքանի դիակավոր խոփիկներ: Ընկ. Պետրովսկու  
անվան գործարանն արտադրում է 19 շարքանի շարքացան  
մեքենաներ:

Վերջերս սկսել են պատրաստել մեծ թվով խոփիկներ  
ուսնեցող—32 շարքանի և նույնիսկ ավելի տրակտորային  
շարքացաններ:

Տրակտորային շարքացանների առանձնահատկույթյուն-  
ներից մեկն այն է, վոր նրանք ավելի մեծ տարածույթյուն  
են ընդգրկում, քան ձիաքար շարքացանները: Այնուհետև,  
տրակտորային շարքացաններն սպասարկվում են հատուկ  
հարմարանքներով, վորոնք ցանքսի ժամանակ քիչ աշխա-  
տող ձեռք են պահանջում:

Տրակտորային շարքացաններն ունեն ինքնաշարժ բարձ-  
րացնող գործիքներ, վորոնք բարձրացնում և իջեցնում են  
խոփիկները:

Վորպեսզի խոփիկները խրվեն հողում և լավ թաղվեն  
սերմերը, դրա համար ձողերի վրա կան զսպանակներ, վո-  
րոնք սեղմում են դիակերը: Իրակերը հողից և աղտերից  
մաքրվում են հատուկ թորիներով:

Տրակտորային շարքացանների ցանող ապարատները  
նույնպես ունեն մի քանի առանձնահատկույթյուններ: Այս-  
պես, որինակ, Ռոստսելմաշի\* շարքացանները ցանող ապա-  
րատներին շարժումը հաղորդում են վոչ թե ատամնավոր,  
այլ շղթայավոր հաղորդիչներով, դրա համար ել այս շար-  
քացանները «վերին սերմացանի» համար չեն գործարկվում,

\* Ներկայումս մեր յերկրամասը մատակարարվում է Ռոստսելմաշ  
և «Կարմիր Աստղ» գործարանների շարքացան մեքենաներով:

այլ խոշոր սերմեր ցանելիս պետք են լինում ավելի շատ բանալու նրանց այն թեքվածքը, վորն ուղղվում է դեպի սերմատուփերի հատակները:

Բացի դրանից, Ռոստսելմաշի գործարանի շարքացաններն ունեն յերկու կանոնավորիչներ, վորոնք գործի յեն դնում նրանց, խփիլիկները բարձրանում է և իջնում են յերկու ավտոմատներև միջոցով: Ռոստսելմաշի շարքացանների ընդգրկող լայնությունը հավասար է 3,65 մետրի:

«Կարմիր Աստղ» գործարանի շարքացան մեքենաները շարժումը հաղորդում են ատամնավոր հաղորդիչներով, վորի շնորհիվ լրացուցիչ ատամնավոր հաղորդիչներ դնելիս, շարքացանները կարող են գործարկվել վերին սերմացանի համար, որինակ, այնպիսի սերմեր ցանելիս, ինչպիսին են՝ յեղիպտացորենը, լոբին, դենագերչակը և այլն: Խփիլիկները բարձրացնելու և իջեցնելու համարև ավտոմատ, վորն աշխատում է սերմարկղի առջևում գտնվող լծակի միջոցով: Լծակը կառավարում է տրակտորխտը՝ նստած տեղից: «Կ. Աստղ» գործարանի շարքացանն ընդգրկում է 3,6 մետր լայնություն:

## ԻՆՉ ՊԵՏԲ Ե ԱՆԵԼ, ՎՈՐՊԵՍՋԻ ՀԱԶՈՂ ԱՇԽԱՏԻ ՇԱՐԲԱՑԱՆԸ

Գյուղատնտեսության մեջ մեքենաների գործադրությունը վիթխարի նշանակություն ունի: Մեքենաները խոշոր չափով բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը: Նրանք լավացնում են աշխատանքի վորակը, հնարավորություն են տալիս աշխատանքները կատարելու ավելի կարճ ժամանակամիջոցներում, իսկ այս բոլորը բարձրացնում է բերքատվությունը և պակասեցնում է բերքի կորուստները:

Բացի դրանից, մեքենաների գործադրումը կրճատում է բանուժի պահանջը: Մեքենաները հեշտացնում են մարդու աշխատանքը, ազատում են նրան արտադրության ամենագժվար պրոցեսներից:

Իրա հետ մեկտեղ մեքենաներն եժանացնում են գյուղատնտեսական մթերքների արտադրությունը խորհանտեսություններում և բարձրացնում են աշխուրբի արժեքը կոլտնտեսություններում, հետևաբար, ավելացնում կոլտնտեսությունների և խորհանտեսությունների յեկամուտները:

Այս բոլոր ոգուտները կարելի չե ձեռք բերել միայն այն դեպքում, յերբ մեքենաները լիովին սարքավորված և աշխատանքի համար միանգամայն պիտանի լինեն, յերբ աշխատանքի ժամանակ ուշադիր խնամք տարվի նրանց հանդեպ:

Նախորդ գլխում ասվեց, թե ինչ ոգուտներ է տալիս շարքային ցանքը: Այժմ կանգ առնենք այն պայմանների վրա, վորոնք անհրաժեշտ են պահպանել՝ շարքացան մեքենաների հաջող աշխատանքի համար: Առաջին և ամենակարևոր պայմանն այն է, վոր շարքացան մեքենաներն աշխատանքն սկսելուց շատ առաջ պետք է ուղիղ հավաքված լինեն և վերջին աստիճանի ուշադրությամբ ստուգվեն: Նայելիս՝ պետք է ստուգել բոլոր պտուտակների գլուխները և հեղույսները, վորոնք ամրապնդում են շարքացանի ատանձին մասերը: Յեթե ստուգելու ժամանակ վորևե թերություն նկատվի, ապա իսկույն պետք է վերացնել այդ թերությունը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ցանող ապարատի, ատամնավոր անվի, ինչպես նաև խփիլիկների վրա (հասարակ և դիսկավոր):

Ցանող ապարատից պահանջվում է, վորպեսզի նա լիովին սարքված և աշխատելու ընդունակ լինի: Ցանող ապարատի ճախարակները ճիշտ պետք է դրվեն շղթայավոր հաղորդիչի ցանքսային գլանակի վրա, իսկ շղթայավոր հաղորդիչն իր հերթին նույնպես պետք է սարքված լինի:

Կանոնավորիչները տեղափոխելիս ճախարակները պետք է ազատ շարժվեն: Շարքացանի կանոնավորիչները և լծակներն ամրացնելիս՝ վորոշ քանակությամբ սերմացու ցանե-

ու համար, ճախարակները չպետք է հեռացվեն իրենց առանցքներից: Պետք է անպայման ստուգել նաև, վոր մեքենան աշխատեցնելու ժամանակ ատամնավոր հաղորդիչը ճիշտ կցվի և վոր խոփիկները ըարձրացնելիս, ատամնավոր հաղորդիչն ամբողջովին միանա ցանող ապարատին: Ատամնավոր անիվները ճիշտ պետք է ամրացվեն և ազատ պըտտվեն: Ուշադրություն պիտի դարձնել նաև սերմահաղորդիչների ճիշտ սարքված լինելու վրա:

Քե դիակավոր և թե սովորական խոփիկները ճիշտ պետք է զետեղվեն (ծուռ չպետք է լինեն) և լավ ամրացվեն: Թարսխաձև խոփերի ուղղահայաց շարժումը, վեր ու վար, պետք է լինի ազատ:

Դիակավոր խոփիկների դիակերն աշխատանքի ժամանակ պետք է ազատ կերպով պտտվեն. դիակերն ամրացնող հեղույնները լավ պետք է ամրացվեն, նույնը պետք է ասել նաև այն հեղույնների մասին, վորոնք ամրացնում են թորխերը, լծակները և այլն:

Դիակավոր խոփիկներ ունեցող շարքացաններն ստուգելիս, պետք է ուշադրություն դարձնել նաև դիակերի սուր լինելու վրա:

Լծակները պետք է լինեն լիովին սարքված և լավ աշխատելու ընդունակ:

Շարքացան մեքենաներն ստուգելիս նկատի պիտի ունենալ, վոր խոփիկները հանդիսանում են վերին աստիճանի կարևոր մասեր, դրա համար ել նրանց վիճակի վրա մեծ ուշադրություն պետք է դարձնել: Լծակները գործի դնելու ժամանակ խոփերը թեթև և հավասարաչափ պետք է խորասուզվեն հողում:

Սակայն, վորպեսզի շարքացանը կանոնավորապես աշխատի, դրա համար բավական չէ միայն ցանող ապարատի, խոփերի, լծակների լավ սարքված լինելը, այլ պետք է նաև, վոր առանցքները, լծափայտը, արկղի առջևի մասը և շարքացանի մյուս մասերն ել լավ աշխատելու ընդունակ լինեն:

## ԻՍՐԲԱՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՏՈՒԳՈՒՄԸ 3ԵՎ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ

Շարքացանների լավ աշխատելու և ամուր շատ կարևոր անպայման անհրաժեշտ պայմանները հետևյալներն են:


1. Շարքացանը պետք է ճիշտ և համաչափ ցանի:

2. Խոփերը, առջևի մասը, (առջևի մաս ունեցող շարքացաններում) ճիշտ պետք է իրենց տեղերում դրվեն:

Առաջին պայմանը պահպանելու համար պետք է ճիշտ խմանալ, թե ինչպես պետք է դրվի լծակը այս կամ այն քանակությամբ սերմ ցանելու համար: Այնուհետև անհրաժեշտ է, վորպեսզի լուրջ խոփիկները միևնույն քանակով ցանեն սերմը:

Սերմացվի քանակն ավելացվում և պակասեցվում է մի լծակի (խկ յերբեմն նաև յերկու) ողնությամբ: Այս լծակներն ամրացվում են արկղի հետևի պատին: Նրանց միջոցով կարելի չէ այս ու այն կողմը տեղափոխել ցանքսային դլանակը՝ նրա վրա դտնվող ճախարակների հետ միասին:

Սովորաբար յուրաքանչյուր շարքացան ունի բարակ և նեղ տախտակ, վորն ունի բաժանմունքներ և մշակույթներ ցույց տվող մաս: Այս տախտակի միջով շարժվում է պտուտակով ամրացված և սերմացանը կանոնավորող լծակ: Սակայն, նրա ցուցմունքներին հավատալ չի կարելի: Բանը նրանումն է, վոր



Նկ. 1. Սերմացանի կանոնավորիչ (ոնգուլիատոր)



սերմացանք կապ ունի սերմացվի ծավալի և վոչ թե նրա քաշի հետ: Այդ իսկ պատճառով անպայման պետք է ստուգել, թե արդյոք ճիշտ է դրված սերմացան կանոնավորող լծակը, զանազան տեսակի հացահատիկի առանձին պարտիաներ ցանելու համար: Նույնը պիտի անել նաև միենուցյն մշակույթի զանազան տեսակների համար: Ահա թե ինչու, պիտավորապես, անհրաժեշտ է ստուգել շարքացանք սերմացանի համար:

Բացի, դրանից, յերբեմն ցանող ապարատի առանձին մասերի ցնցվելու և մաշվելու պատճառով, կանոնավորիչի ցուցմունքները նույնպես չեն համապատասխանում իսկական սերմացանի քանակին:

Այսպես ուրեմն, յեթե ցանելու ժամանակ շարքացանները շատուզվեն, այդ դեպքում սխալներ կարող են տեղի ունենալ:

Սերմացանի համար շարքացաններն ստուգվում են այսպես.

Ամենից ստաջ պետք է վորոշել, թե ինչքան տարածութուն կարող է ցանել մեքենան՝ քաշող անվի մի անգամ պտտվելու դեպքում: Սրա համար անհրաժեշտ է իմանալ, թե ինչքան լայնութունն է ընդգրկում շարքացանը և ինչքան յերկարութուն ունի քաշող անվի շրջանակը: Դրանք չափում են չափերի պնդումով, իսկ յեթե չափերի պնդան, ապա կարելի չէ չափել թելով, իսկ հետո մետրով կարելի չէ իմանալ ճիշտ յերկարութունը: Ընդգրկման լայնութունը հավասար է լինելու ծայրերի խոփիկների միջև յեղած տարածությանը՝ զուամրած այն տարածութունը, վոր գրութունն ունի յերկու հարևան խոփիկների միջև: Որինակի համար, յեթե ծայրերի խոփիկների միջև յեղած տարածութունը 3,5 մետր է, իսկ հարևան խոփիկների միջև յեղած տարածութունը 15 սանտիմետր, ապա ընդգրկման լայնութունը հավասար կլինի 3,65 մետրի:

Անվի շրջանակը չափելիս, վերջինս մաքուր պետք է լինի, թեև կամ չափերի պնդում պետք է գնել նրա մակերեսվորութի վրա:

Յեթե քաշող անվի շրջանակը 4 մետր յերկարութունն ունի, իսկ ընդգրկման լայնութունը հավասար է 3,65 մետրի, ապա ցանվելիք տարածութունն անվի մի անգամվա պտույտի դեպքում՝ հավասար կլինի  $4 \times 3,65 = 14,6$  քառակուսի մետրի:

Վորոշելով այն տարածութունը, վորը պետք է ցանի շարքացանը անվի մի պտույտով, կարելի չէ իմանալ, թե շարքացանի քաշող անվի քանի պտույտ պետք է անի այս կամ այն տարածութուն, որինակի համար, 1 հեկտար ցանելու դեպքում: Մենք որինակ ըերինք, վոր անվի մի պտույտով կարելի չէ ցանել 14,6 քառակուսի մետր, իսկ վորպեսզի 1 հեկտար, կամ 10.000 քառակուսի մետր ցանվի, դրա համար շարքացանի անվի պետք է կատարի 685 պտույտ (10.000 : 14,6):

Սրանից հետո կարելի չէ գնել կանոնավորիչ լծակը, վորոշ քանակությամբ սերմացու ցանելու համար, շարքացանի մի կողմը բարձրացնել հաղորդիչ մեխանիզմի կողմից և, ածելով հացահատիկը արկղի մեջ, կատարել 685 պտույտ: Ցանված քանակութունը ցույց կտա նաև, թե շարքացանն ինչքան է ցանելու կանոնավորիչ լծակի սվլյալ դրվածքի դեպքում: Սակայն 685 պտույտ կատարելը չափազանց յերկար է տևում: Դրա համար նպատակահարմար է հաշվել, թե քանի պտույտ կատարել վոչ թե մի հեկտարի, այլ հեկտարի մի տասերորդ կամ հինգ տասերորդ մասի համար: Ավելի ճիշտ վորոշելու համար, ավելի լավ է ստուգումը կատարել հեկտարի մի տասերորդ մասի վրա: Մեր բերած որինակի հիման վրա հեկտարի մի տասերորդ մասի համար պետք է կատարել 68,5 պտույտ կամ 68 լրիվ պտույտ՝ ավելացրած կես պտույտ:

Վորեն քանակությամբ սերմ ցանելու, որինակ մի հեկտարին 160 կիլոգրամ ցանելու համար, կանոնավորիչ լծակը գնելուց հետո, շարքացանի արկղում պետք է լիցնել հացահատիկ (արկղի կեսից վոչ պակաս) և շարքացանի տակ փռել կտավ: Սա անելուց հետո, ձողի, փոքր գերանի, կամ

ավելի լավ է, դռնը արտի միջոցով բարձրացնում են շարքա-  
ցանի մի կողմը հաղորդող մեխանիզմի կողմից: Շարքացա-  
նի այս կողմը պետք է հասցնել, մոտավորապես, այնպիսի  
բարձրութեան, վոր քաշող անիվը հողից 4—5 սանտիմետր  
բարձր լինի: Այնուհետև, խոփիկները գործի յեն դնում և  
սկսում են պտտեցնել քաշող անիվը: Այս դեպքում, նախ  
քան ստուգման ձեռնարկելը, պետք է մի քանի անգամ  
ըջել ցանքսային զլանակը, վորպեսզի բոլոր ապարատնե-  
րը հացահատիկով լեցվեն: Հենց վոր նրանք լեցվեն, ան-  
հրաժեշտ է սկսել ստուգումը՝ պտտեցնելով քաշող անիվը:  
Պետք է պտտեցնել այնպիսի արագութեամբ, ինչպիսի ա-  
րագութեամբ անիվը շարժվում է աշխատանքի ժամանակ,  
և այս դեպքում նրա պտույտը պետք է լինի համաչափ-  
առանց ընդհատումների:

Հենց վոր անվի պտույտը վերջանա, կշռում են կտավի  
վրա թափված հատիկը. յեթե ցանող ապարատը լավ է աշխա-  
տում, ապա կտավի վրա պետք է լինի այնքան հատիկ, ինչքան  
վոր նրան անհրաժեշտ է հեկտարի մի տասերորդ մասը ցանե-  
լու համար: Յեթե վորոշված է հեկտարին ցանել 160 կիլոգ-  
րամ, ապա այն դեպքում կտավի վրա պետք է լեցվի 16  
կիլոգրամ, այսինքն մեկ տասերորդ մաս: Շատ կամ քիչ  
քանակութեամբ հացահատիկ ցանելիս, համապատասխան  
չափով առաջ պետք է տանել կանոնավորիչ լծակը:

Կանոնավորիչի նոր սարքումից հետո, ցույց տրված  
աշխատանքը նորից են կատարում: Այս աշխատանքը պետք  
է կատարել մինչև այն ժամանակ, քանի դեռ չի վորոշված,  
թե վոր բաժանման վրա պետք է սարքել կանոնավորիչը՝  
այս կամ այն քանակութեամբ սերմացու ցանելու համար:  
Կանոնավորիչի սարքումն անպայման վորոշվում է սերմա-  
ցանի սահմանված նորմաների համար: Յեթե շարքացանն  
ունի յերկու անկախ ցանող ապարատ, ապա նրանցից յու-  
րաքանչյուրն ստուգվում է առանձին: Շարքացանի ստու-  
գումը պետք է կատարել յուրաքանչյուր մշակույթի, յուրա-  
քանչյուր տեսակի համար:

59218.66

Սա հնարավորութունն է տալիս ճիշտ սարքելու շարքա-  
ցան մեքենան ցանքսի համար և, այսպիսով, խուսափելու  
թե պակաս և թե ավել ցանելուց:


Շարքացանը ցանքսի համար սարքելուց հետո, խորհուրդ  
է տրվում շինել հսկիչ չափեր (կադապարիկներ), վորոնք  
ցույց պետք է տան ճախարակների բանուկ մասի լայնու-  
թյունը: Այս չափերը պետք է գտնվեն մեքենավարի ձեռ-  
քում, վորպեսզի նա կարողանա ստուգել շարքացանի ճիշտ  
սարքված լինելը:

Բացի վերոհիշյալ ստուգումից, անհրաժեշտ է նաև ստու-  
գել, թե արդյոք առանձին խոփիկները հավասարաչափ են  
սերմ ցանում: Այս ստուգումը կատարում են այսպես.

Շարքացանի արկղի մեջ մոտավորապես կիսով չափ սերմ  
են լեցնում: Այնուհետև յուրաքանչյուր խոփիկին հազցնում  
են կտավն պարկ: Այս պարկերը պատրաստվում են առաջուց  
նրանք բոլորն են հավասար քաշ պետք է ունենան: Յերբ  
պարկերն անցկացվել են խոփիկների վրա, այն ժամանակ  
բարձրացնում են շարքացանի մի կողմը (քաշող անվի կող-  
մից) դռնը արտի կամ յերկաթյա ձողի միջոցով: Սրանից հետո,  
գործի զցելով խոփիկները, սկսում են պտտեցնել քաշող անիվը:

Անիվը պետք է պտտեցնել համաչափ, այնպիսի արա-  
գութեամբ, ինչպիսի արագութեամբ վոր շարքացանը սովո-  
րաբար առաջ է շարժվում դաշտում: Անիվը պտտեցնում են  
մինչև այն ժամանակ, քանի դեռ մեքենան չի ցանել, մո-  
տավորապես, մեկ տասերորդ հեկտար: Սրանից հետո հատի-  
կով լիքը փոքր պարկերը հանում և կախում են՝ յուրաքան-  
չյուրն առանձին-առանձին: Ապա վերցնում են բոլոր  
պարկերի ընդհանուր քաշը և բաժանում այն պարկերի  
քանակի վրա: Յեթե հատիկով լիքը բոլոր պարկերի  
քաշը կշռում է 18 կիլոգրամ, իսկ բոլոր խոփիկների  
քաշը հավասար է 24-ի, ապա այդ դեպքում մի պարկի մի-  
ջին քաշը հավասար է լինելու 750 գրամի:

Յուրաքանչյուր պարկի քաշը առանձին-առանձին հա-  
վասարվում է մի պարկի քաշին: Այսպիսով, կրկնց միջև յեղած




տարբերութիւնը 4 տոկոսից ավել չպետք է լինի: Յեթն մենք ունենք պարկի միջին քաշ 750 գրամ, ապա առանձին պարկերը պետք է կշռեն վոչ ավել, քան 780 գրամ և վոչ պակաս, քան 720 գրամ:

Յեթն պարկի միջին քաշը 66 գրամ է, առանձին պարկերը պետք է կշռեն 693 գրամից վոչ ավել և 639 գրամից վոչ պակաս:

Յեթն տարբերութիւնը 4 տոկոսից ավել է, այդ դեպքում անհրաժեշտ է ուշադրութեամբ ստուգել շարքացանի ցանոց ապարատը, յերևան հանել այս աննորմալութեան պատճառները և վերացնել նրանք:

Բացի շարքացանի ճիշտ գործարկելուց և ցանոց ապարատի ճիշտ աշխատեցնելուց, պետք է նաև ճիշտ սարքել



Նկ. 2. Յանոյ ազրեգատ մարքյորով

մարքյորը, իսկ առջևի մաս ունեցող շարքացաններում ճիշտ սարքել առջևի մասը—պետք է նաև ճիշտ սարքել խոփիկները:

Յանքաը տրակտորային շարքացաններով կատարելիս, տրակտորին ճիշտ ուղղութիւն տրվում է հատուկ մարքյորի միջոցով, վորը և ցույց է տալիս տրակտորի ուղղութիւնը հետևյալ անդամ անցնելիս:

Մարքյորը սարքվում է նայած կցորդ շարքացանների քանակին և կցող շղթայի սխառեմին:

Ձևավոր ցանքս կատարելիս պետք է ունենալ մի մարքյոր, իսկ հետքերով ցանքս կատարելիս—յերկու մարքյոր:

Մարքյորն իր կառուցվածքով հաճախ ներկայացնում է իրենից յերկու միացած խողովակային ձողեր, վորոնցից մեկը մտնում է մյուսի մեջ, վորի շնորհիվ մարքյորը կարող է ունենալ դանազան յերկարութիւն: Մարքյորի մի ծայրն ամրացվում է շարքացանին, իսկ մյուս ծայրին կա պտտվող դիսկ կամ անիվ:

Յերբնմն մարքյորն ամրացվում է տրակտորի առջևի մասին, և այս դեպքում տրակտորիստն այնպես է դեկավարում տրակտորը, վոր մարքյորն անցնի շարքացանի քաշող անվի հետևից:

Մարքյորը սարքելիս, նկատի պիտի ունենալ հետևյալը.

Մարքյորը պետք է ունենա այնպիսի յերկարութիւն, վոր մարքյորի հետքից մինչև տրակտորի մեջտեղ յեղած հեռավորութիւնը հավասար լինի մի շարքացանի ընդգրկման լայնութեանը, բողմապատկած շարքացանների թվով (այն դեպքում, յերբ շարքացանները միևնույն ընդգրկման լայնութիւն ունեն) առանց տրակտորի առջևի անիվների միջև յեղած հեռավորութեան կեսի: Որինակ, յեթն տրակտորին կցված են Ռոստսելմաշի 24 շարքանի յերկու շարքացաններ, իսկ տրակտորի առջևի անիվների հեռավորութիւնը 1,2 մետր է, ապա մարքյորի յերկարութիւնը հավասար է լինելու  $(365 \times 2) - (1,2 : 2) = 6,7$  մետր:

Առջևի մաս ունեցող շարքացանի առջևի մասի անիվները պետք է ճիշտ դասավորվեն: Առջևի մասի անիվները պետք է դասավորվեն այնպես, վոր շարքացանի ճիշտ ընթանալու դեպքում, նրանք գնան քաշող անվի առաջընթաց հետքով: Շարքացանի դեկավար առջևի մասը թույլ է տալիս լավ աշխատելու, առանց բացատներ թողնելու:

Առջևի մասի անիվների միջև յեղած հեռավորութիւնը վորոշելու համար, պետք է շարքացանի ընդգրկման կրկնակի լայնութիւնից հանել առջևի մասի անիվների միջեղ գտնվող տարածութիւնը: Որինակ, շարքացանի ընդգրկման

լայնությունը 1,5 մետր է, հետեվի անիվների միջև յեղած հեռավորությունը 1,8 մետր է. այս դեպքում առջևի մասի անիվների հեռավորությունը հավասար է  $(1,5 \times 2) - 1,8 = 1,2$  մետրի. յուրաքանչյուր անիվ առանցքի մեջտեղից պետք է հեռու լինի 0,6 մետր:

Աշխատանքի ժամանակ առջևի մասը ղեկավարվում է հատուկ բանվորի կողմից: Յեթե ձիաքարը շարքացանն առջևի մաս չունի, ապա այդ դեպքում խորհուրդ է տրվում սարքել հատուկ մարքյոր—ձող:

Խոփիկներն իրարից հավասար հեռավորության վրա պետք է լինեն: Լայնաշարք ցանքսերի ժամանակ բոլոր շարքամիջյանները պետք է համապատասխանեն շարքերի միջև սահմանված հեռավորությանը: Թե սա և թե մյուսը կարելի չե ստուգել հատուկ բաժանող տախտակներով:

Հենց այս տախտակների միջոցով և կարելի չե շտկել խոփիկների հեռավորության միջև գոյություն ունեցող թեթությունները:

Բաժանող տախտակը սովորաբար լինում է շարքացանին կից: Նա մի հասարակ տախտակ է, վորի յերկարությունը հավասար է շարքացանի հետևի անիվների միջև յեղած հեռավորությանը: Բաժանող տախտակն ունի գծեր, վորոնք ցույց են տալիս, թե վորոշ շարքամիջյանների դեպքում ինչպես սարքել խոփիկները և այս դեպքում քանի խոփիկ գործի յե դրվում:

Բաժանող տախտակը չափազանց հեշտացնում է խոփիկների դասավորությունը զանազան շարքամիջյանների դեպքում, որինակ, յեզիպտացորեն, արևածաղիկ և այլ մշակութիներ ցանելիս: Յեթե այսպիսի տախտակ կա, ապա կարիք չկա ժամանակ վատնելու հաշվելու համար, թե քանի խոփիկ պետք է աշխատեցնել, ինչպես նրանց դասավորել և այլն: Բավական է հենց խոփիկների տակ դնել բաժանող տախտակը, նրա վրա իջեցնել խոփիկները և միանգամից պարզվում է, թե ինչ պիտի անել, ինչպիսի խոփիկներ հանել կամ փակել, ինչպիսիները աշխատանքի գցել:

Բաժանող տախտակի ծայրին կան գծեր, վորոնք ցույց են տալիս շարքացանի ցանող ապարատի դասավորությունը: Բացի դրանից, տախտակի վրա կան դեռ ուրիշ գծեր էլ, վորոնք համապատասխանում են խոփիկների դասավորությանը, գծերից յուրաքանչյուրն ունի համապատասխան թիվ: Յուրաքանչյուր խոփիկի թիվը ցույց է տալիս, թե ովյալ խոփիկն ինչ քանակությամբ աշխատող խոփիկների հետ է աշխատում:

Տախտակի մեջտեղում ցույց է տրվում շարքամիջյանների լայնությունը, աշխատող խոփիկների զանազան քանակություն լինելու դեպքում:

Յեթե բաժանող տախտակ չկա, ապա այդպիսին պետք է պատրաստել: Թե ինչպես պետք է բաժանումներ կատարելնրս, վրա, այդ մասին պետք է խորհրդակցել գյուղատնտեսի հետ:


## ՇԱՐՔԱՑԱՆԻ ԽՆԱՄԲՆ ԱՇԽԱՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿ

Յեթե շարքացաններն աշխատում են տրակտորով, ապա մի տրակտորին պետք կլինի սովորաբար կցել 2—3 է ավելի շարքացան: Մի տրակտորին 6 շարքացանից ավելի կցելը լավ չէ, վորովհետև այս դեպքում նրանց աշխատանքը դժվարանում է: Շարքացանների թիվը վորոշվում է տրակտորի քաշելու կարողությամբ: Պիտի աշխատել վոր տրակտորը լրիվ բեռնավորվի: Որինակի համար, СТЗ տրակտորին կարելի յե կցել 5 շարքացան՝ 13 շարքանի, 3 շարքացան՝ 19 շարքանի և 2 շարքացան՝ 24 շարքանի: ՓП տրակտորին—3 շարքացան՝ 13 շարքանի, 2 շարքացան՝ 19 շարքանի և 1 շարքացան՝ 24 շարքանի: Կատերպիլլեր 25|30 տրակտորին պետք է կցել 5 շարքացան՝ 19 շարքանի և 3 շարքացան՝ 24 շարքանի:

Կցող մասերն իրենց կառուցվածքով լինում են զանազան: Նրանց կառուցվածքն ընդհանրապես բարդ չէ:

№ 3 և 4 նկարում ցույց է տրված կցող մասը յերեք կամ յերկու շարքացանի համար: Յերեք շարքացանի համար

կցող մասը կառուցվում և անյակես. վերցնում են քառանկյա  
 ձող, վորն ամրացվում և առջևի շարքացանի հետևի ծայրին.  
 Այս ձողի ծայրերին կան յերկաթե տախտակներ. վերջին-




Նկ. 3 Կցող շղթա 3 շարքացանի համար

ներխ կցվում են ծայրի յերկու շարքացաններ, իսկ մեջ-  
 տեղի շարքացանը միացվում և անմիջապես տրակտորի  
 կցող ողակին:

Յերկու շարքացանի համար կցող մասը բաղկացած է լի-  
 նում փայտե ձողից, վորի յերկու ծայրերին ել դանվում են  
 անիվներ: Յերկաթե յերկու կեռերի և յերկաթե տախտակ-  
 ների միջով ձողը միանում է տրակտորին: Շարքացան-  
 ները ձողին միանում են խոմուռների ոգնությամբ, վորոն-  
 ցից դեպի շարքացան են ձգվում յերկաթե քաշող մասեր:  
 Շարքացանների կցումն այնպես պետք է լինի, վոր ամե-

նուրեք պահպանվեն ճիշտ շարքամիջյան տարածություն-  
 ները, չվարած տեղեր չմնան և ցանվածի վրա շարքա-  
 ցաները նորից չկոխեն և չանցնեն:



Նկ. 4 Կցող շղթա 2 շարքացանի համար

Շարքացաններն աշխատեցնելուց առաջ պետք է յուզել:  
 Շարքացանները պետք է յուզել հանքային յուղով, բայց  
 ստամբավոր անիվը չեն յուղում:

Վարդեսդի կանխել ցանվող հացահատիկի վարակումը ժանգից, դրա համար անհրաժեշտ է շարքացանի արկղը լվանալ ֆորմալինի լուծույթով <sup>1)</sup>։

Շարքացանները խնայողաբար և լրիվ ոգտագործելու նպատակով, անպայման հարկավոր է նրանց ամրացնել վորոշ կալտնտեսականների և խորհտնտեսային բանվորների։ Շարքացանները խնամելու գործում, թե աշխատանքի ժամանակ և թե աշխատանքից հետո, պետք է վերացնել դիմազրկուկ յուճը։ Շարքացանների վրա աշխատողները խնամքով և ուշադիր պետք է վերաբերվեն մեքենաներին և ճիշտ ոգտագործեն նրանք։ Մեքենաների կոտրվելու, նրանց ժամանակից շուտ մաշվելու համար, նրանք պարտավոր են խիստ պատասխանատու լինելու։ Աշխատանքի համար և աշխատանքից հետո մեքենաները հանձնելիս և ընդունելիս պետք է ուշադրությամբ զննել։

Շարքացաններն անպայման պետք է ունենան բոլոր անհրաժեշտ պարագաներ, ինչպես որինակ, բանալիներ, մուրճ, դուր, խոփիկներ մաքրելու համար քերիչներ, փայտե բիրեր, խոփիկների աշխատանքի խորությունը կանոնավորելու համար կապարե գնդիկներ և այլն։

Հասկավորների ցանքան ավելի լավ է կատարել ձեվավոր յեղանակով, իսկ շարատունի մշակույթները պետք է ցանվեն միմիայն ուղիղ ակոսներով։

Սահավազոր տրակտորների համար հատկացվում է 100 մետր լայնությամբ ցանելու հողամաս, իսկ ուժեղ տրակտորների համար—200 մետր։ Լավ է ակոսի յերկարությունը լինի 2 կիլոմետր։

Շարքացանի հետեվից անմիջապես պետք է գնան թեթև առփաններ. հողի մակերեսը հավասարեցնելու համար առփանների փոխարեն յերբեմն գործադրվում են շղթաներ, ճանքսից հետո թեթեվ առփաններով կատարվող հողամբարակումը լավ արդյունքներ է տալիս։

<sup>1)</sup> Լուծույթը պատրաստվում է այսպես. մի մաս ֆորմալինի համար վերցնում են 200 մաս ջուր։

Յեթե սովորական խոփիկները վորակե պատճառով քիչ չափով են խորասուզվում հողում, ապա նրանցից պետք է կանխել ծանրոցները։ Ծանրոցները միջոցով խոփիկների քաշը պետք է այնպես ավելացնել, վոր խոփիկների թե առջևի և թե հետեվի շարքերը սերմերը միևնույն խորությամբ թաղեն։

Դիսկավոր խոփիկների խորացումը կատարվում է զրպանակների ոգունությամբ։

Բացի դրանից, խոփիկների խորությունը կարելի է կանոնավորել լծկանների միջոցով։

Շաբա ց սնով պեճ է անցնել ուղիղ գծով։ Սա հեշտացնում է աշխատանքը և հնարավորություն է տալիս խտուսիելու բացատներին։

Աշխատանքի ժամանակ թե սովորական խոփիկներ ունեցող և թե դիսկավոր խոփիկներով շարքացանները պահանջում են ուշադիր հսկողություն և ճիշտ խնամք։ Ցանքասի ժամանակ պետք է խիստ հետեվել, վոր շարքացանները վոչ մի դեպքում բացատներ չթողնեն և ցանված հողի վրայով չանցնեն։ Սնվույթ աշխատանքի, բացատների համար մեղավորները խիստ պատասխանատու լինան պետք է յենթարկվեն։

Խոփիկները պետք է աշխատեցնել վոչ թե միանգամից, այլ աստիճանաբար։ Յեթե նրանք արագությամբ գործի գցվեն, ապա միանգամից կարող են հողով լցվել բունեի հատիկները և թույլ չտալ, վոր նրանք կանոնավորապես ցանվեն։

Շարքացանով ցանելիս, խոշոր ուշադրություն պետք է դարձնել ցանող ապարատի աշխատանքին։ Շարքացանի սերմացանը կանոնավորող լծակը պետք է պինդ ամրացնել։ Նրան պետք է ամրացնել այն դրության մեջ, ինչպիսի դրության մեջ նա պետք է լինի, վորպեսզի ցանվի մի սի դրության մեջ նա պետք է լինի, վորպեսզի ցանվի մի հեկտարի համար պահանջվող սերմի քանակությունը։ Սըբան գուզընթաց, ցանող ապարատի բոլոր ճախարակները ճիշտ պետք է աշխատեն։ Ուշադրությամբ պետք է հետե-

վել, վոր հացահատիկը պահված չմնա սերմահաղորդիչներում կամ խոփիկներում:

Աղտոտված հողեր ցանելիս, սովորական խոփիկներ ունեցող շարքացանների խոփիկները հաճախ բռնում են մութախոտերի արմատները կամ ցողունները, վորոնք մնքննաչի աշխատելու ժամանակ պտտվում և ընկնում են խոփիկի տակ: Հացահատիկը շարքացանից ընկնում և այդ արմատների վրա և այդպիսով սերմացանը խանդարվում է: Վորպեսզի դրանից հնարավոր լինի խուսափել, անհրաժեշտ է աշխատանքի ժամանակ խոփիկները կանոնավոր մաքրել կեղտոտություններից:

Պետք է հետեւել նաև, վոր շարքացանի արկղում մըշտական սերմ լինի:

Ոռոչոր սերմեր ցանելիս, ինչպես որինակ, արևածաղի, սոյաչի և բոստանի բույսերի և այլն սերմեր, հաճախ պատահում է, վոր սերմերը շարդուփշուր են լինում: Իրանից խուսափելու համար պետք է ցանող ապարատը վերև բարձրացնել:

Իխակավոր շարքացանների դիակերը մաքրվում են քերիչներով: Այս քերիչները սեղմված պետք է լինեն դիակերին, սակայն չպետք է այնքան քիպ սեղմել: Աշխատելիս, սովորական խոփիկներ ունեցող շարքացանների խոփիկները մոլախոտերից և հողի կտորներից պետք է մաքրվեն:

Յեթե շարքացանն աշխատում է, ժամանակ առ ժամանակ պետք է ստուգել հեղույսները և պտուտակների գրլուխները, վորպեսզի նրանք չթուլանան:

Կարեւոր է նաև ճիշտ և ժամանակին յուղել շարքացանները: Պետք է յուղել ցանող ապարատի բոլոր բանուկ մասերը (բացի ձախարակից և ատամնավոր անվից), այնուհետեւ յուղել քաշող և առջևի մասի անիվների և դիակերի առանցքները: Մեքենան ամենապակասը պետք է յուղել որակյան մի անգամ: Յուղելու համար յեղած անցքերը պետք է լիքը լինեն: Վորպեսզի այդ անցքերին փոշի չնստի, դրա համար հարկավոր է փակ պահել:

Ցանքս կատարելու ժամանակ, դաշտում պետք է կատարվի նաև շարքացանի ընթացիկ նորոգում: Իաշտային նորոգումը պետք է ժամանակին կազմակերպվի:

Բացի դրանից, պետք է հետեւել նաև տափանի աշխատանքին. վերջինս հողով չպետք է ծածկված լինի:

Վերջապես, յեթե ցանքսի ժամանակ պետք է լինի մի մշակութից անցնել մյուսին, այդ դեպքում անպայման հարկավոր է լավ և ամբողջովին մաքրել շարքացանն ուրիշ մշակութի կամ ուրիշ տեսակի սերմերից, վորոնք դրանից առաջ ցանվելիս են յեղել: Յեթե այս կանոնը չըպահվի, ապա մշակութի կաղտոտվի և զանազան տեսակներն իրար կխառնվեն, վորպիսին պետք է համարել անթույլատրելի:

Ցանքսի ամենակարգից շարքացանի առաջին յերթը պետք է կատարվի նշանակված գծով, այսինքն շարքացանի դնալուց առաջ ուղիղ գծով պետք է դնել նշանաձողեր և դրանց ուղղությամբ քշել մեքենան: Սա հեշտացնում է շարքացանի աշխատանքը և հնարավորություն է տալիս լավ ցանելու դաշտերը:

Ցանքան ավարտելուց հետո շարքացանները խնամքով պետք է մաքրել մնացորդ սերմերից, ադտերից, փոշուց և այլն և դնել մեքենաների պահեստներում կամ շորով ծածկել: Մաքրելուց հետո շարքացանները թանձր յուղով պետք է յուղել: Պահելիս, սերմահաղորդիչ խողովակները պետք է հանել և առանձին պահել: Նույնը պետք է անել նաև շարքացանի զանազան այլ մասերի մասին:

Յեզրակացնելով, պետք է նկատել հետեւյալը. ցանքան անցկացնելիս, դյուղատնտեսության այս պատասխանատու աշխատանքը կատարելիս՝ վճռական պայքար պետք է տանել սերմացանի սահմանված նորման իջեցնելու փորձերի դեմ: Սերմացանի սահմանված նորման խիստ պետք է պահպանվի: Ապա չափազանց խիստ հսկողություն պետք է սահմանել սերմացուն ձախսելու վրա, վճռական և անողոր պայքար պետք է մղել սերմացվի գողության դեմ:

Այնուհետև վոչ մի բոպե չի կարելի մոռանալ, զոր գա-  
ստփարզային թշնամին—կուլակուլթյունը և զանազան հակա-  
հեղափոխական տարրերին, անկասկած, հարմար առիթ են  
փնտռում, արգելք լինելու գյուղատնտեսական զանազան  
աշխատանքների կատարմանը: Նբանք ցանքսի ժամանակն  
յեվս ամեն կերպ կաշխատեն արգելք հանդիսանալ այս չա-  
փազանց կարեվոր և շտապ աշխատանքի հաջող անցկաց-  
մանը: Այդ իսկ պատճառով պետք է համառ և անողոք  
պայքաբ մղել կուլակուլթյան և հակահեղափոխական տար-  
րերի դեմ:



Օր. թւտտոր  
Յ. Կ. Շովյան  
Տեղ. թւտտոր  
Դ. Մ. Մարխարյան

3016  
ԱՅ-Վ  
38-Ա

Տւտտո Վ ՆԱԶ, 3/11 1933 Դ  
Տւտտո Վ ՆԱԶ, 3/11 1933 Դ,  
Օբ'եմ 7, լուտ, ԼԻՏԱ  
ԿԻՐԱՅ 2000 ՅԻՆ,

<< Ազգային գրադարան



NL0280660



ԳԻՆԸ 20 ԿԱՊ.  
Цена 20 коп.

99323

16400



На армянском языке

Н. И. ТРОФИМЕНКОВ

ПРОВЕРКА, УСТАНОВКА И РАБО-  
ТА РЯДОВОЙ ХЛЕБНОЙ СЕЯЛКИ

И-во «СЕВЕРНЫЙ КАВКАЗ»

ԳՐԱԳՈՒՀԱՅՈՒԹՅԱՆ

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ, ՄՈՍԿՈՎԱԿԱՆՈՎ ՓՈՂ. 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)